



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
HELSINKI CITIZENS' ASSEMBLY  
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,  
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59  
59 Tigran Metsi st.  
Vanadzor, 2001, Republic of Armenia  
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68  
E-mail: [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)

Ե/2017- 06.02/ 59

06.02.2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետ  
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ

2014 թ. ապրիլի 17-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Նշված ցանկում ներառված մի շարք միջոցառումների պատասխանատու կամ համակատարող են ՀՀ մարզպետարանները:


Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ռազմավարության կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝

6.4. Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման (հոգեբույժի/հոգեթերապևտի/կլինիկական հոգեբանի կաբինետներ) կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2014-2019 թվականներ/

- 2015 թվականի հոկտեմբեր – 2016 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ նշված միջոցառման շրջանակներում, եթե այո, մասնավորապես ի՞նչ աշխատանքներ են իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել

6.5. Հոգեբուժական դիսպանսերների ամբուլատոր ծառայությունների ապակենտրոնացման միջոցով Հայաստանի երեք քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր) խոշոր պոլիկլինիկաներում կաբինետների ձևավորման նպատակով առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2015-2016 թվականներ/

- Նշված միջոցառման շրջանակներում 2015 թվականի հոկտեմբեր – 2016 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ, եթե այո, մասնավորապես ի՞նչ աշխատանքներ են իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել



- Արդյո՞ք ներկայացվել են առաջարկություններ ՀՀ կառավարություն, ե՞րբ, ի՞նչ արդյունքներ են գրանցվել  
(*խնդրում են տրամադրել առաջարկությունների փաթեթը*)

6.6. ՀՀ մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու կարողությունների գնահատում (Այն մարզերում, որտեղ գործում են հոգեբուժական ստացիոնարներ, տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները, չփոխելով տեղակայումը, ներառել ստացիոնար ծառայություն իրականացնող կազմակերպության մեջ Այն մարզերում, որտեղ չկան հոգեբուժական ստացիոնարներ, ձևավորել առանձին ստացիոնարներ կամ բաժանմունքներ մարզային հիվանդանոցների կազմում՝ նրանց միացնելով տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները՝ չփոխելով տեղակայումը) /2014-2015 թվականներ/

- 2015 թվականի հոկտեմբեր – 2016 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ նշված միջոցառման շրջանակներում, եթե այո, մասնավորապես ի՞նչ աշխատանքներ են իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել
- Արդյո՞ք մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները՝ չփոխելով տեղակայումը, ներառվել են «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր»-ի մեջ

6.8. Երեխաների և դեռահասների հոգեբուժական բաժանմունքների ձևավորման կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2014-2016 թվականներ/

- 2015 թվականի հոկտեմբեր – 2016 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ նշված միջոցառման շրջանակներում, եթե այո, մասնավորապես ինչ աշխատանքներ են իրականացվել և ինչ արդյունքներ են գրանցվել
- Արդյո՞ք ներկայացվել են առաջարկություններ ՀՀ կառավարություն և ի՞նչ արդյունքներ են գրանցվել  
(*խնդրում են տրամադրել առաջարկությունների փաթեթը*)

7.1. Փորձնական ծրագրի իրականացման շրջանակում Հայաստանի Հանրապետության երկու համայնքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն, որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի /2014-2015 թվականներ/

- Արդյո՞ք նախատեսվում է Սպիտակի խնամքի տնից բացի համայնքահեն այլ ծառայության ստեղծում Լոռու մարզում, եթե այո՝ ի՞նչ աշխատանքներ են տարվել ծառայության ստեղծման համար, ո՞ր համայնքում է նախատեսվում ստեղծել, ի՞նչ ժամկետներում
- Արդյո՞ք նախատեսվում է պետական և/կամ համայնքային բյուջեից Սպիտակի խնամքի տան ֆինանսավորում, եթե այո՝ երբևիցե և որքան ֆինանսական միջոցներ է հատկացվելու խնամքի տանը, ինչ համամասնությամբ